



**ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ ESF/CS/CQ-2019/001**

Ծրագիր «ԵՄ հանուն Հայաստանի կայուն Էներգետիկայի» (EU4ASEP)  
Դրամաշնորհ՝ ENI/2017/393-496

Ծրագրի անվանումը – Խորհրդատվական ծառայություններ Արթիկում արևային ՖՎ կայանի կառուցման նախապատրաստումն իրականացնելու համար

Էներգախնայողության աջակցման հիմնադրամը դրամաշնորհ է ստացել Եվրոպական Միությունից՝ «ԵՄ հանուն Հայաստանի կայուն Էներգետիկայի» ծրագրի ծախսերը հոգալու համար և նպատակ ունի միջոցների մի մասն ուղղել սույն խորհրդատվական ծառայությունների ձեռքբերմանը: Ծրագիրն իրականացվում է **Էներգախնայողության աջակցման հիմնադրամի** կողմից /Պատվիրատու/:

Խորհրդատվական ծառայությունները /Ծառայություններ/ ներառում են՝

**Նպատակը**

Պատվիրատուն փնտրում է խորհրդատու՝ Արթիկում արևային ՖՎ կայանի կառուցման նախապատրաստումն իրականացնելու համար, ներառյալ տեղանքի գնահատման, ենթակառուցվածքների, ցանցին միացման և առնչվող այլ առաջարկների ներկայացման, ինչպես նաև մանրամասն նախագծային-նախահաշվային փաստաթղթերի պատրաստման, և կառուցման ընթացքում հեղինակային հսկողության իրականացման համար:

**Աշխատանքների շրջանակը**

Սույն առաջադրանքի շրջանակը ուղղված է Արթիկ քաղաքում 0.6-1.0 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցմանը:

**Հետաքրքրված իրավասու խորհրդատուները** հրավիրվում են ներկայացնելու իրենց հետաքրքրության հայտերը, հետևյալ գործառույթների իրականացման համար՝

- ա) Շինհրապարակի երկրաչափական գնահատում;
- բ) Երկրատեխնիկական հետազոտություն;
- գ) Հաղորդակցության ուղիներ և անհրաժեշտ կոմունալ ծառայություններ
- դ) Ցանցային միացման գնահատում;

- ե) Մանրամասն նախագծային և նախահավային փաստաթղթերի պատրաստում, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր անհրաժեշտ թույլտվությունների և հաստատումների ստացումը;
- զ) Կայանի կառուցման ընթացքում հեղինակային հսկողության իրականացում:
- է) Կայանի կառուցման պայմանագրի բանակցություններին մասնակցություն:

Պատվիրատուն այժմ հրավիրում է իրավասու կազմակերպություններին՝ ներկայացնելու իրենց հետաքրքրության հայտերը Ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված խորհրդատուները պետք է տեղեկություններ տրամադրեն այն մասին, որ իրենք ունեն անհրաժեշտ որակավորում և համապատասխան փորձ Ծառայությունները մատուցելու համար:

**Կազմակերպությունների գնահատման չափորոշիչներն են՝**

*ա/ Հիմնավորված աշխատանքային փորձառություն (100 կՎտ հզորությունից ավել առնվազն մեկ արևային կայանի նախապատրաստման/կառուցման փորձ) (առավելագույնը 45 միավոր).*

*բ/ Հետևյալ ծառայությունների մատուցման հիմնավորված աշխատանքային փորձառություն.*

- Արևային ՖՎ կայանների նախագծում, ներառյալ շինհրապարակի նախապատրաստման և ամրացման կոնստրուկցիաների աշխատանքները (առավելագույնը 20 միավոր)
- Շինհրապարակի երկրաբանական ուսումնասիրություն (առավելագույնը 15 միավոր).
- Մասնագիտական անձնակազմ (առավելագույնը 20 միավոր)

**Հայտում պետք է ներառվեն հետևյալ փաստաթղթերը.**

- Դիմում Հիմնադրամի տնօրենի անունով;
- Պետական գրանցման վկայականի պատճենը;
- Հետաքրքրության հայտը ստորագրողի լիազորագիրը (եթե տնօրենը չէ);
- Կազմակերպության պրոֆիլի հակիրճ նկարագրությունը
- Վերջին 3 տարիների ընթացքում նմանատիպ խորհրդատվական ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկատվություն, ներառյալ ծրագրերի անվանումները, պատվիրատուները, պայմանագրերի գները, ժամկետները;
- Հետաքրքրության հայտը համատեղ ձեռնարկատիրական գործունեության սկզբունքով ներկայացնելու դեպքում պայմանագրի պատճենը;
- Աշխատակազմի ցանկը և աշխատանքային փորձառության վերաբերյալ տեղեկատվությունը (CV),
- Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ լիցենզիաների պատճենները;
- Ծրագրի գործողությունների պլան;
- Այլ տեղեկատվություն, որն անհրաժեշտ կհամարի Հայտատուն;

- Մեթոդալուսմանը, ընթացակարգերը և տեխնիկական ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են գործառույթների ավարտման համար;

Խորհրդատուների ընտրությունը կատարվում է ԵՄ գնումների ընթացակարգերի համաձայն:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ Համատեղ ձեռնարկատիրական գործունեության կամ ենթախորհրդատուի ձևով, որպեսզի ուժեղացնեն իրենց որակավորումը:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ստորև նշված հասցեով երկուշաբթիից ուրբաթ **Ժ. 9:00-18:00** (տեղական ժամանակով):

Հետաքրքրությունների հայտը պետք է հանձնել թղթային տարբերակով կամ էլ-փոստով ստորև նշված հասցեով մինչև **2019թ. հուլիսի 10-ը, Ժ. 18:00**, (տեղական ժամանակով): Հետաքրքրության հայտը ներկայացվում է հայերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն: Էլեկտրոնային ներկայացման դեպքում պետք է ուղարկել միաժամանակ երկու հասցեներին: Աշխատանքների իրականացման ենթադրվող ժամկետը՝ 1,5 ամիս:

*Էներգախնայողության աջակցման հիմնադրամ*

*Գործադիր տնօրեն՝ Աստղինե Պասոյան*

*Էրեբունի Պլազա, գրասենյակ 414,*

*Երևան 0010, Հայաստան*

*Հեռ: +374 93 61 16 19*

*Էլ.փոստ: [info@esfarmeria.org](mailto:info@esfarmeria.org); [ArturGrigoryan@raed.am](mailto:ArturGrigoryan@raed.am)*

*Վեբ կայք՝ [www.esfarmeria.org](http://www.esfarmeria.org)*